



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՅ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Առարկան՝ ԴԱՍՎԱՐ

Հետազոտող ուսուցիչ՝ ՌՌԻԶԱՆՆԱ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝

Երևան 2022

## *ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ.....	5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	20

## *Ներածություն*

**Թեմայի արդիականությունը:** Այսօր հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անձից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները հաղորդակցվելու միջոցով լուծելու հնտություններ: Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը: Այս է պատճառը, որ ներկայումս բավականին արդիական է կրտսեր դպրոցականների խոսքի և հաղորդակցման գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է ծավալվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբի համագործակցությամբ: Տարրական դպրոցում են ձևավորվում երեխայի անձի բազմաթիվ որակները, այդ թվում՝ նրա հաղորդակցումը: Այս կարողության ձևավորման միջեցներից են խոսքը և հաղորդակցումը:

Արդի ուսուցման հիմնական նպատակն է՝ ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ: Խոսքի և հաղորդակցման կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում երեխայի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում խոսքի և հաղորդակցման միջոցով կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կապակցված խոսքի կառուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքի և հաղորդակցմանը, մտքի թռիչքին, որն էլ իր հերթին հետագայում կրտսեր դպրոցականի մոտ վերածվում է կարողության:

**Չետազոտման նպատակն** այնպիսի մեթոդական համակարգի մշակումն է, որը կնպաստի կրտսեր դպրոցականների խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

## Չետագոտման խնդիրներն են՝

- Ուսումնասիրել հետագոտական աշխատանքի վերաբերյալ առկա մասնագիտական գրականություն:

- Չետագոտական աշխատանքի անցկացման միջոցով բացահայտել խոսքի և հաղորդակցության դերը կրտսեր դպրոցականների հաղորդակցման կարողության ձևավորման գործում:

- Չիմնավորել տարրական դպրոցում խոսքի և հաղորդակցության կարևորությունը աշակերտների հաղորդակցական կարողության զարգացման գործում:

- Մշակել և փորձարկել խոսքի և հաղորդակցման կիրառման համար անհրաժեշտ միջոցներ ու հնարներ:

- Կիրառվող մեթոդներ

- մասնագիտական գրականության ուսումնասիրում,

- մայրենիի դասերի ունկնդրում և վերլուծում,

- ժամանակակից համագործակցային մեթոդների փորձարկում,

- դիտում, զրույց՝ հարցազրույց, տեղեկատվական զրույց,

նախապատրաստական զրույց:

## **ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ**

**Ի՞նչ է հաղորդակցումը:** Այն տեղեկատվության փոխանցումն է մարդուց մարդ.

բազմաշերտ գործընթաց, որը ենթադրում է և անձերի, և մարդկային խմբերի միջև շփման զարգացում: Հաղորդակցման խնդիրներին առնչվում են մարդկային գործունեության տարբեր բնագավառների մասնագետներ, դրանով իսկ պայմանավորված հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պայմանավորված հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու կենսական խնդիրների թվին :

Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ հույզեր և այլն:

Ինչպես ժամանակին ճշմարտացիորեն արտահայտվել է Ջոն Ռոկֆելլերը.

Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար: Ընդգծենք, որ վերջին տարիներին մանավանդ գործատուները նախապատվություն են տալիս այն աշխատողներին, ովքեր բացի մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից տիրապետում են նաև հաղորդակցման հմտություններին: Հաղորդակցություն բառի միջազգային անվանումը ծագել է լատիներեն *communico* բառից, որը նշանակում է մասնակցել, դարձնել ընդհանուր, տիրել միասին: Լեզուն, լինելով հաղորդակցության միջոց, արտացոլում է նաև, մարդկանց մտածելակերպը: Եվ կարելի է համարել բնական, որ հիշյալ բառը տարբեր ազգեր յուրովի են կիրառել՝ դրան իքնատիպ նշանակություն վերագրելով:

## **Իսկ ի՞նչ է նշակում կարողանալ հաղորդակցվել .**

Այն նշանակում է ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները՝ նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել:

Տեղեկություն հաղորդողն ընտրում է փոխանցվելիք միտքը, գաղափարը, ձևակերպելով ծածկագրելով խոսքային հաղորդակցման միջոցների օգնությամբ և հաղորդում պատասխանը:

Ընդունված է համարել, որ հաղորդակցման ընթացքում տեղեկության 35տոկոսը փոխանցվում է խոսքային, իսկ 65 տոկոսը՝ ոչ խոսքային ճանապարհով: Խոսքային ուղիով փոխանցվում է «մաքուր» տեղեկատվություն, իսկ ոչ խոսքայինով՝ վերաբերմունք: Մարդու ոչ խոսակցական վարքն անքակտելիորեն կապված է նրա հոգեկան վիճակի հետ և դրանով իսկ կարող է բացահայտել անհատի ներաշխարհը:

Հաղորդակցման հիմնական նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով: Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթաց է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով/ժեստեր/, դեմքի արտահայտություններով, խոսքով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով:

Այսպիսով, հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխնեգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

### **Խոսքային հաղորդակցության տեսակները.**

- ✓ Հաղորդակցման տեսակներն ու հաղորդակցային կաղապարները:
- ✓ Հաղորդակցումը գործընթաց է, որը թույլ է տալիս տարբեր մեթոդներով տեղեկատվություն փոխանակել:

- ✓ Հաղորդակցումն ավելին է, քան գրավոր և բանավոր խոսքը:
- ✓ Հաղորդակցվում ենք անգամ այն ժամանակ, երբ չենք խոսում:

### **Խոսքային հաղորդակցության երեք հիմնական տեսակներն են՝**

- ✓ Հարալեզվական,
- ✓ Լեզվական,
- ✓ Ոչ լեզվական:

1. Լեզվական /խոսելով, երգելով, գրելով/, որն ունի իր տարատեսակետները՝ երկխոսություն, մենախոսություն, ոճերը/:

2. Ոչ լեզվական /Ֆիզիկական միջոցներով՝ ժեստեր, կեցվածք, նայվածք, հպում կամ շոշափում, առարկայական հաղորդակցում՝ հագուստ, սանրվածք/:

3. Հարալեզվական /տաղաչափական միջոցներով՝ հնչերանգ, ձայնի ուժգնություն, շեշտ, խոսելաոճ/:

Այդ միջոցները բաժանվում են 2 խմբի՝

ա/ տաղաչափական, որի մեջ մտնում են խոսքի տեմպը, ձայնի բարձրությունն ու ուժգնությունը, հնչերանգը, տեմբրը.

բ/ արտալեզվական – դադարներ, հոգոցներ, հազ, ծիծաղ կամ լաց:

### **Հաղորդակցման ձևեր են.**

- ✓ Կինետիկա՝ շարժաբանություն
- ✓ Տակեսիկա՝ հպումների ամբողջություն
- ✓ Սենսորիկա՝ զգայական ընկալումների ամբողջություն
- ✓ Պրոկսեմիկա՝ տարածության օգտագործումը
- ✓ Քրոնեմիկա՝ ժամանակի օգտագործումը:

Ինչ վերաբերում է երկխոսությանը, ապա այն երկու անձի միջև խոսքային հաղորդակցումն է, որը կարող է տեղի ունենալ թե դեմ առ դեմ, թե հեռակա կարգով: Այն ճանաչողության հիմնական ձևերից է, առավել ևս ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ, որտեղ երկխոսության համար մարդիկ օգտվում են տեղեկատվական և հաղորդակցման տարբեր միջոցներից: Պետք է փաստենք, որ անկախ դրանց տեսակետներից, հաղորդակցումը բոլոր դեպքերում պահանջում է հատուկ մշակույթի ձևավորում, որի կարիքն այսօր հատկապես ակնառու է: Ինչպիսին էլ լինի երկխոսության յուրաքանչյուր մասնակցի դերերի հարաբերակցությունը, բոլոր դեպքերում էլ գործ ունենք տեղեկություն «հաղորդողի» և «ընդունողի» հետ: Դրանց միջև կառուցված հարաբերությունների որակից է կախված հաղորդակցման արդյունքը: Հաղորդակցման միջոցները կարող են լինել խոսքային՝ գրավոր և բանավոր, ոչ խոսքային և ոչ վերբալ: Բնականաբար, հաղորդակցման ընթացքում իր դերերով ու նշանակությամբ առանձնանում է խոսքային միջոցը, որը, բնորոշ լինելով միայն մարդկանց, հանդիսանում

է որպէս ամենաուժեղ խթան: Նշենք, որ հաղորդակցվողների պահանջները, շարժառիթներն ու նպատակները հաղորդակցական գործընթացի անհրաժեշտ տարրերն են: Հաղորդակցության ընթացքում մարդիկ փոխադարձաբար ազդում են միմյանց վրա՝ ընկալելով ու գնահատելով, մեկնաբանելով ու բացահայտելով մեկը մյուսի վարքագծի պատճառները:

### **Հաղորդակցումը իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ.**

- Դրա միջոցով մենք բավարարում ենք մեր հաղորդակցվելու պահանջմունքները:
- Մենք հաղորդակցվում ենք՝ պահելով և կատարելագործելով մեր ինքնաճանաչությունը:
- Դրա միջոցով կատարում ենք մեր սոցիալական պարտականությունները:
- Կառուցում ենք մեր փոխհարաբերությունները:
- Կատարում ենք տեղեկատվության փոխանակում:
- Հաղորդակցվում ենք, որպեսզի ազդենք ուրիշների վրա:

Հաղորդակցման ժամանակ մտքերն արտահայտվում են արտասանվող հնչյունների զանազան հաջորդականությունների օգնությամբ՝ հնչյունների տարբեր խմբերով բառեր ու դրանց կապակցություններ ստեղծելով, որոնք ունկնդրին են հասնում օդի ալիքավորումների միջոցով հաղորդակցվելիս մարդիկ միմյանց փոխանցում են իրենց մտքերը՝ այդ կերպ իրականացնելով հաղորդակցումը հասարակության անդամների միջև և անգամ այն ժամանակ, երբ մենք մտածում ենք, մեր գիտակցության մեջ առաջանում է բառի այս կամ այն պատկերը, և մեծ մասամբ՝ խոսքային արտասանական պատկերը:

### ***Լեզվի էությունն ու գործառույթները***

Առաջին հայացքից պարզ թվացող հարցին, թե ինչ է լեզուն, միշտ չէ, որ բոլորի կողմից ընդունելի պատասխան է տվել: Լեզուն գոյություն ունի հասարակության մեջ, հասարակության շնորհիվ: Չկա հասարակություն առանց լեզվի, և չկա լեզու առանց հասարակության: Եթե ոչնչանում է հասարակությունը, որը լեզվի կրողն է, ապա լեզուն դառնում մեռած: Սակայն մեր լեզուն շատ ավելի ընդարձակ է, քան վերջին իմաստով ընկալումը: Լեզուն որպէս հասարակական երևույթ իրականացնում է գործառույթներ, որոնք պայմանավորված են ինչպէս նրա առանձին միավորների գործառնական դերով,



այնպես էլ ամբողջ լեզվի կիրառական ոլորտներով: Մարդիկ, միմյանց հաղորդակցվելով, փոխանակում են իրենց մտքերը, կամքը, տրամադրությունն ու հույզերը: Լեզվի արտահայտչական գործառույթն այն է, որ նա հանդես է գալիս իբրև մտքերի արտահայտման միջոց: Դա լեզվի այն ունակությունն է, որ խոսքի մեջ հանդես է գալիս որպես խոսողի զգացմունքների, հույզերի, ցանկությունների արտահայտման միջոց: Լեզուն կուտակում է հասարակության պատմական փորձն ու իմացությունը, գիտության տարբեր բնագավառների նվաճումները և դրանք հաղորդում սերնդից սերունդ: Լեզվի կարևոր գործառույթներից է կառուցողական դերը: Լեզուն իր այս դերն իրականացնում է իբրև մտքերի ձևավորման միջոց: Լեզուն մտածողության հիմնական միջոցն է, որն ապահովում է մտքերի նյութական ձևավորում ու տեղեկատվության փոխանակումը հանրության անդամների միջև: Բազմիցս նշել ենք, որ հաղորդակցումը մի գործընթաց է, որն ունի երկու կողմ. մի կողմից խոսողը, մյուս կողմից՝ լսողը, ընկալողը: Մարդիկ միմյանց հաղորդում են իրենց մտքերը, հույզերը, ապրումները, ցանկություններն ու ձգտումները, համակրանքն ու հակակրանքը և այլն՝ իրականացնելով այն մեծամասամբ լեզվի միջոցով, որով և լեզուն կատարում է իր հասարակական դերը՝ հաղորդակցման ապահովումը: Անշուշտ, լեզվի հասարակական հաղորդակցման դերն ու գործառույթը սրանով չի սահմանափակվում. այն ամբարում ու պահպանում է իր մեջ հասարակության գործունեության արդյունքները, հասարակական փորձն ու գիտելիքները փոխանցելով սերունդների փորձն ու գիտակցությունն իրենց հաջորդներին: Տարբերակվում է հաղորդակցման բանավոր և գրավոր ձևեր: Յուրաքանչյուր տարբերակի համար բնութագրական են մի շարք հատկանիշներ, որոնց հիման վրա տարբերակվում են հաղորդակցման տեսակները: Այդ հատկանիշներից են՝

### **1. Հաղորդակցման պայմանները**

- ուղղակի կամ անմիջական շփում՝ ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ հետադարձ կապով, արձագանքով,
- անուղղակի կամ միջնորդավորված հաղորդակցում:

### **2. Մասնակիցների քանակը**

- մենախոսություն,
- երկխոսություն,
- պոլոլիզ՝ մի քանի մարդու խոսք:

### **3. Հաղորդակցման նպատակը**

- տեղեկացում,

- համոզական գործունեություն,
- ժամանացային շփում:

#### 4. Իրադրության բնույթը

- գործնական հաղորդակցում,
- առօրյա-խոսակցական, կենցաղային հաղորդակցում:

### Լեզու և խոսք

Խոսք, հին քերականության մեջ նաև՝ բան, լեզվի կենդանի գոյը: Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով, նրան համապատասխան: Այն լեզվի հետ միասնության մեջ է: Խոսքը բնորոշ է նաև նրանով, որ այն նյութական, ֆիզիկական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով: Ըստ ծավալի՝ զանազանում են համառոտ խոսք և ընդարձակ խոսք, իսկ ըստ արտահայտման եղանակի՝ բանավոր կամ գրավոր, արտաքին կամ ներքին: Արտաքին խոսքը սովորական, հնչյունական-արտասանական իրացում ունեցողն է: Ներքին խոսքը հնչյունական-արտասանական դրսևորում չունի, չի ուղղված ունկնդրին. այն մարդու մտապատկերներում գոյություն ունեցող տարբերակն է: Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեքստի վերածված խոսքն է. ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով: Այս դեպքում խոսքային իրադրություն ստեղծվում է մտովի, ոչ իրականում: Ջուրկ է բանավորին հատուկ կառուցվածքային ու ոճաարտահայտչական հնչերանգային որոշ հատկանիշներից: Կարևոր դեր են ստանում գրության եղանակները, կետադրությունը: Հաղթահարում է բանավոր խոսքի ժամանակային ու տարածական սահմանափակությունները: Տարբերում են նաև հեղինակային խոսք և ուրիշի խոսք:

Ըստ գործառնական ոլորտների՝ զանազանում են խոսքի հետևյալ տեսակետները. առօրյա, կենցաղային, գործարարական, ճարտասանական, բեմական, գրական, բարբառային և այլն: Ըստ պարունակած ինֆորմացիայի բնույթի տարբերում են մտածական՝ մտավոր խոսք և զգացական խոսք, պատկերավոր խոսք, քաղաքավարական խոսք և այլն: Խոսքը ոչ միայն մտքի ու զգացմունքի արտահայտիչն է, այլև ձայնական ամբջություն, ձայնական շրջանակ, որն ընդունակ է դիմանալու ամեն տեսակ առաջադրվող հանգամանքների կողմից թելադրված զգացմունքների ճնշմանը: Խոսքը միայն մարզված և կայուն ձայնի շնորհիվ կարող է բոլորի կողմից հավասարապես լինել: Խոսքը ներգործուն դարձնելու համար այն պետք է ասվի տեղին և ժամանակին՝

նկատի ունենալով նաև խոսքային համապատասխան իրադրությունը: Այստեղ հարց է ծագում. երբ է խոսքը տեղին կամ ինչ է նշանակում տեղին խոսքի առարկային, լսարանին և խոսողին:

### **«խոսքային հաղորդակցումը» մայրենիի դասաժամին**

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է անբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: Մայրենի լեզուն ուղղված է՝

- սովորողի ինքնարտահայտմանը, ինքնադրսևորմանը,
- սեփական միտքը բանավոր և գրավոր ձևակերպելուն և արտահայտելուն,
- սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը:

### **Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները՝**

- սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանումն ու զարգացում,
- լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում,
- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման կարողությունների զարգացում,
- բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում,
- ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում,
- վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում,
- լեզվական տարրական գիտելիքների յուրացում:

## Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա՝

- անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները,
- կառուցել ճիշտ և փաստարկված խոսք,
- զարգացնել լեզվական-ստեղծագործական երևակայությունը:

## Մայրենի լեզվի ուսուցման կազմակերպումը

- Ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով սովորողի առօրյայի, ամենօրյա գործունեության հետ:

- Մայրենի լեզուն, որպես հիմնական լեզու, անընդհատ է և ամենուր: Այն առկա է գործունեության բոլոր ձևերում: Ուսումնական միջավայրը նպաստում է, որ սովորողն առանց սխալվելու վախի արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

- Ուսուցումը կազմակերպել թվային գործիքների լիարժեք կիրառմամբ: Թվային գործիքները հնարավորություն են տալիս տեսածը, լսածը, կարդացախը հրապարակելու, քննարկման դնելու /առցանց քննարկում/, ասելիքը տեսանյութով, ձայնագրությամբ, ֆոտոշարքով ներկայացնելու:

- Ստեղծել անընդհատ հաղորդակցության միջավայր:

Մայրենի լեզվի ուսուցման առաջին կարևոր փուլը՝ տառուսուցումը, չի տարանջատվում մայրենի լեզվին առաջադրվող մյուս խնդիրներից, այլ համարվում է գրավոր խոսքի զարգացմանը նպաստող կենդանի ու արդյունավետ մեթոդ:

Ուսուցման առաջին տարվա առաջին օրերից սովորողը սկսում է տառեր, բառեր մուտքագրել ու միաժամանակ ընթերցել: Համակարգիչը, էլեկտրոնային գրատախտակը, ուսումնական խաղերը հնարավորություն են տալիս առանց արհեսական ու պայմանական բաժանումների փոխկապակցել գրաճանաչության նախագրային, գրային, ետգրային փուլերը: Երեխան նկարում-պատմում է, միաժամանակ՝ երգում-վանկատում, մուտքագրում-ընթերցում: Երեխան պատմում է ամենի մասին, ինչն իրեն հետաքրքիր է, ինչն իրեն հուզում է: Պատմում է իր, ընտանիքի, հարազատների, տան մասին՝ ցուցադրելով նախապես թվային ֆոտոխցիկով արված լուսանկարները, դիտում՝ ընկերոջ ցուցադրած ֆոտոշարքը և տալիս իրեն հետաքրքրող հարցը, ֆոտոշարքից առանձնացնում որոշակի նկարներ, կոնկրետացնում խոսքը, ապա նկարագրում, բնութագրում, բացատրում, մեկնաբանում, հետո անվանում /տեքստից անցում

պարբերության, նախադասության, բառակապակցության, բառի, հնչյուն-տառի/: Գրական նյութերի ուսուցման ճամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում: Երեխան լսում ու դիտում է հեքիաթներն ու բանաստեղծությունները, ապա պատմում – ձայնագրվում թվային ձայնագրիչով ու նորից լսում, հետո նկարում՝ վրձնով, ինչպես նաև համակարգչով, բենադրում- տեսագրվում՝ դառնալով հեքիաթի, ոտանավորի կերպար ու հերոս: Այդպես մեդիան ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ, ժամանակակից ու հետաքրքիր է դարձնում: Ուսուցողական այդպիսի միջավայրում երկրորդ, երրորդ, չորրորդ դասարանցիներ ավելի համարձակ ու վստահ է արտահայտվում: Ավելանում են բանավոր, ինչպես նաև գրավոր խոսքին ներկայացվող պահանջները: Կազմակերպվում է առկա, հեռավար, և առցանց ուսուցում՝ մայրենի լեզուն անընդհատ գործածելու, ու զարգացնելու հնարավորություն տալու համար: Կրտսեր դպրոցում մայրենի լեզվի խնդիրը խոսքային հնարությունների, կարդալու կարողությունների զարգացումն է, իսկ սովորողը կարդում ու գրում է անընդհատ, բոլոր դասաժամերին: Այստեղ ևս մեկ անգամ ընդգծվում է մայրենի անընդհատ ուսուցումը մաթեմատիկայի դասին՝ խնդրի պայմանների վերլուծության, բացատրության, պահանջի ձևակերպման, պատճառաբանության, պատասխանի, բնագիտության դասին՝ փորձի ներկայացման, դիտարկման, արդյունքների գրանցման, ուսումնական ճամփորդության ժամանակ՝ տեսածը պատմելու, ներկայացնելու, հարցադրումների տեսքով: Ընթերցանության նյութերի ընտրությունն էլ ինքնանպատակ չէ: Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կադապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը:

Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը:

### **Սովորողի կատարած աշխատանքը դպրոցում և տանը;**

Կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Կարդալ, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ: Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Կարդալիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը՝ մտնել հանդիպած բառերի հոմաբիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել

համապատասխան բառով կամ արտահայտությամբ: Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդը են սովորողն ու ուսուցիչը: Մեդիագրադարանն անընդհատ լրացվում է թվային գրքերով, համացանցային ռեսուսներով և կրթահամալիրի ուսուցիչների, սովորողների և այլոց ստեղծած տեսաուղիոնյութերով: Ուսումնական նյութեր ընտրելիս և հանձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները: Կարդում են դասական ստեղծագործություն, գիտահանրամատչելի նյութ, լուր, տեղեկություն, խնդիր, առաջադրանք:

**Գրել:** Սովորողը պիտի ցանկանա գրել իրեն ծանոթ, իրեն մոտ, հետաքրքիր, իրեն առնչվող թեմաների մասին: Երեխան պիտի գրի իր մասին, իր ապրումների, իրեն շրջապատող աշխարհի, մարդկանց ու իրեն հուզող ու հետաքրքրող երևույթների, իրադարձությունների մասին: Նման թեմաների շուրջ երեխաներն անընդհատ կարող են գրել: Կարող են գրել նկարագրական շարադրություններ, պատրաստել տեղեկատվական նյութեր, օրվա մասին պատմել, գրել նամակներ, ինչպես նաև՝ հայտարարություններ ու շնորհավորանքներ:

**Չորհինել:** Երեխաների միտքը և երևակայությունն անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտք ձևավակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Չորհինած պատմությունը գրելուց հետո երեխան ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի էլեկտրոնային էջը, աուդիո տարբերակը, ներկայացումը հեքիաթի հիման վրա պատրաստած մուլտֆիլմը, որի հերոսներին նույնպես պատրաստել է սեփական ձեռքերով/պատրաստել գունավոր թղթով, կտորով, պլաստիլինով կամ կավով/: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցոր տալիս հենց հեղինակին, համոզում ավարտը փոխել, նոր հերոս ներմուծել և այլն:

**Նամակներ:** Երեխաները շատ են սիրում նամակներ գրել ոչ միայն ծանոթ մարդկանց, այլև հեքիաթի հերոսին, կերպարին, անսպասելի մեկին: Նամակի բովանդակությունն էլ կարող է լինել տարբեր: Նամակներում երեխաները շատ են սիրում խոստովանություններ անել, արտահայտել իրենց հույզերը՝ սերը, զարմանքը, բողոքը, պահանջը, խնդրանքը, պարտավորությունները: Նամակները կարող են խորհուրդ տալու կամ հրավիրելու, բարկանալու կամ ոգևորելու համար: Երեխաների երևակայությունը ազատելը և ստեղծագործական միտքը զարգացնելը կրտսեր դպրոցի կարևոր խնդիրներից է:

**Գնահատում:** Կարևոր է, երբ կատարած աշխատանքը, գործադրած ջանքերը գնահատվում են: Գնահատականը պիտի ոգևորի սովորողին և առաջ մղի: Յուրաքանչյուր սովորող հնարավորություն է ունենում արտահայտվելու, ինչպես նաև կարդալու, կարդացածի վերաբերյալ, վերաբերմունք, կարծիք հայտնելու: Երեխաները կարող են ընկերոջ ստեղծագործությունը, ապա ծավալում առցանց քննարկում, որին մասնակցելու հնարավորություն է ունենում յուրաքանչյուր սովորող:

#### **Առաջին դասարանցու ներկայացվող պահանջներն են՝**

- պատմել իր, ընկերների, օրվա և նախասիրությունների մասին,
- բացատրել, մեկնաբանել ծանոթ բառերի իմաստները,
- պատմել լսած հեքիաթը, պատմությունը, տեսած ֆիլմը, մուլտֆիլմը,
- բնութագրել, նկարագրել, հերոսներին,
- վերաբերմունք, կարծիք արտահայտել հեքիաթի հերոսների, մարդկանց, արարքների վերաբերյալ,
- պատճառաբանել սեփական կարծիքը,
- թվարկել պատմության, հեքիաթի, դեպքերն ըստ հերթականության,
- նոր ավարտ մտածել հեքիաթի, պատմության համար, փոխել ավարտը,
- նկարագրել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին:

Կարևորվում է երևակայական, ստեղծագործական մտածողության զարգացումը, որն իր արտացոլումն է գտնում բանավոր և գրավոր աշխատանքներում երկրորդ դասարանում:

#### **Առաջին դասարանն ավարտող սովորողը պիտի կարողանա՝**

Կարդալ և հասկանալ 2-5 նախադասությամբ տեքստ

- տեքստում անձանոթ , անհասկանալի բառերը գտնել և ընդգծել,
- տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառերը գտնել և ընդգծել,
- տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառը, բառակապակցությունը, նախադասությունը գտնել,
- 3-4 նախադասությունից կազմված պատմություն հորինել և գրել,
- շնորհավորանքներ ը կարճ նամակներ գրել,
- 1-2 նախադասությամբ ավարտել կիսատ թողած միտքը,
- նախադասությունն սկսել մեծատառով, ավարտել վերջակետով,
- հատուկ անունները գրել մեծատառով:

### **Երկրորդ դասարանցուն ներկայացվող պահանջները**

Ծանոթ բառերը միացնելով՝ նոր, անսպասելի բառեր ստանալ և բացատրել.

Փոփոխել ծանոթ հեքիաթները՝

ա/ ավելացնել կամ պակասեցնել հերոսներ,

բ/ փոփոխել իրադարձությունները,

գ /փոփոխել սկիզբը,

դ/ տարբեր հեքիաթների հերոսներով նոր հեքիաթ հորինել

- հորինել նոր, երևակայական հերոսներ,
- հորինել հանելուկներ, շուտասելուկներ:

**Երրորդ դասարանցուն ներկայացվող պահանջները** բնականաբար, ավելանում են: Կարևորվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում նոր բառերի, արտահայտությունների ներմուծումը, միտքն ավելի գեղեցիկ, պատկերավոր և հասկանալի ներկայացնելու, սեփական կարծիքը հիմնավորելու և պաշտպանելու, դիմացինին լսելու և հարցադրումներ անելու կարողությունների ձևավորումը:

Երրորդ դասարանում բանավոր պատումներից բացի, սովորողը սկսում է պատմել նաև գրավոր՝

- պատմել իր, ընտանիքի, ընկերների, օրվա նախասիրությունների մասին՝ հաղորդելով կոնկրետ տվյալներ,



- մի քանի բառով նկարագրել և բնութագրել իրեն, մյուսներին,
- խոսքի մեջ օգտագործել ծանոթ բառերի հոմանիշներն ու հականիշները,
- պատմել լսած հեքիաթը, պատմությունը, տեսած ֆիլմը, մուլտֆիլմը՝ համապատասխան մեջբերումներ անելով,
- բնութագրել, նկարագրել հերոսներին՝ օգտագործելով նոր բառեր, բառակապակցություններ,
- պատասխանել ծանոթ ստեղծագործությանը վերաբերող հարցերին, պատասխանը հիմնավորել,
- վերաբերմունք, կարծիք արտահայտել հեքիաթի, հերոսների, մարդկանց, արարքների վերաբերյալ,
- պաշտպանել սեփական կարծիքը,
- հարցադրումներ անել լսածի վերաբերյալ,
- տեսածի, լսածի, իր հետ կատարվածի մասին կարծիք հայտնել,
- բարդ բառեր կազմել՝ միացնելով մի քանի անսպասելի բառեր և բացատրել դրանց իմացտը,
- փոփոխել ծանոթ հեքիաթները՝

ա/ ավելացնել կամ պակասեցնել հերոսներ,

բ/փոփոխել իրադարձությունները,

գ/փոփոխել սկիզբը, ավարտը,

դ/ տարբեր հեքիաթների հերոսներով նոր հեքիաթ հորինել

- հորինել նոր, երևակայական հերոսներ, նկարագրել, բնութագրել նրանց,
- փոփոխել ծանոթ առած-ասացվածքներ, պատմություններ,
- ստեղծագործաբար մշակել տրված հեքիաթը կամ պատմությունը:

### **Չորրորդ դասարանցին պիտի կարողանա՝**

- տեքստը վերարտադրել տարբեր դեմքերով /հերոսների, իր, հեղինակի, անտեղյակ կամ լավատեղյակ մեկի անունից/,
- տեքստը համառոտել և ընդարձակել,
- թվարկել հերոսներին, նկարագրել և բնութագրել նրանց,

- ծանոթ տեքստից դուրս գրել կամ տեքստում նշել փոխաբերությունները, անծանոթ բառերը, դարձվածքները, առածները և այլն,
- մեկնաբանել, այլ բառով փոխարինել հանդիպած արտահայտությունները, բառերը, բառակապակցություններն ու դարձվածքները:

Դարձվածքները փոխարինել համապատասխան արտահայտություններով հակառակը

- խոսքում գործածել իրեն ծանոթ դարձվածքները, առած-ասացվածքները,
- տարբերել նախադասության տոսակները,
- ուրիշի ուղղակի խոսքը դարձնել անուղղակի և կետադրել,
- ընթերցել և դատողություններ անել ընթերցածի վերաբերյալ,
- գնահատական տալ ստեղծագործության հերոսներին, նրանց գործողություններին,
- տեքստի հաղորդած տողեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարել,
- դիտարկել իրավիճակները տարբեր տեսանկյուններից, արտահայտել վերաբերմունք,
- քննարկումներ և վերլուծություններ կատարել իրավիճակի կամ առաջարկված թեմայի շուրջ:

Սեփական կարծիք հիմնավորել՝ բերելով համապատասխան փաստեր

- պատմել իր, այլոց գործունեության մասին,
- օգտվելով տեղեկատվական աղբյուրներից/՝ ինտերնետ, բառարան, գրքեր, լրատվամիջոցներ/ տեղեկատվական նյութ ստեղծել կատարված իրադարձության, դեպքի, միջոցառման, ուսճամփորդության մասին,
- հարցաշար կազմել և հարցազրույց վարել:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով, գոյություն ունեն խոսքի զարգացման տարբեր հայեցակարգային մոտեցումներով ստեղծված ծրագրեր և ձեռնարկներ, որոնց հիմքում հիմնականում ընկած են խոսքի բաղադրիչները՝ բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն: Սակայն գաղտնիք չէ՝ կարելի է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ, արտահայտիչ խոսք, եթե չունենանք հարուստ, բազմակողմանի զարգացած ներաշխարհով հաղորդակցվելու ցանկություն:

### **Խոսքին ներկայացվող հիմնական պահանջներն են՝**

- ✓ բովանդակություն
- ✓ ճշգրտություն
- ✓ հարստություն
- ✓ տրամաբանություն
- ✓ պարզությունը
- ✓ արտահայտչականությունը

Թվարկված պահանջները սերտորեն փոխշաղկապված են և ուսումնական գործընթացում հանդես են գալիս համաձույլ:

## *ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*

1. Ա. Տեր-Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան Լույս հրատարակչություն, 1974թ.:
2. Զ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան Զանգակ հրատարակչություն, 2013թ.:
3. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևան 1990թ.:
4. Պ. Բեդիրյան ,Յայ լեզուն և մեր խոսքը: Արևելահայ խոսքի ուղեցույց: Գործնականե, 1999:
5. Օ. Казарцева „Культура речевого общения,, Москва, Наука 2003г.
6. Օ. Узорова „Практическое пособие по развитию речи,, Москва 200г АСТ.
7. Т. Ладыженская „Речевые уроки,, М. Просвещение 1995г.